



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1611-Ա

«13» սեպտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՎԱՐԹՆՈՑ 8 ՇԵՆՔԻ 17 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻԶ  
ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անահիտ Հովհաննեսի Պետրոսյանը գտնվում է սոցիալապես ծանր պայմաններում, ունի առողջական խնդիրներ և Վաղարշապատ համայնքապետարան է դիմել ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Անհրաժեշտությունից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Վաղարշապատ համայնքի Զվարթնոց 8 շենքի 17 բնակարանի բնակիչ Անահիտ Հովհաննեսի Պետրոսյանին հատկացնել 100000 դրամ դրամական օգնություն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

14 սեպտեմբեր 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16124

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան» ԱԶ-ի / որակավորման վկայական թիվ 0331 / կողմից 29.06.2022թ. կատարված չափագրությունը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002CYXB7DC.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի սեփականություն հանդիսացող Տիգրան Մեծի փողոցում գտնվող 0.0116հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Տիգրան Մեծի փողոց թիվ 22/2:
- Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16/34

14 անդրադրված 2022թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20Բ ՇԵՆՔԻ ԹԻՎ 16 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՅՎԱԾ ԹՎՈՎ 1 ԲԱՅՎԱԾՔԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 20բ շենքի թիվ 16 բնակարանի բնակիչ Թամարա Գրիգորի Կարապետյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, Արման Սաշիկի Յայլոյանին և Արկադի Սաշայի Յայլոյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 02.05.2005թ. տրված թիվ 1987957 սեփականության վկայականը, «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 16.08.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2022JEZSMM / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 20բ շենքի թիվ 16 բնակարանին կից ինքնակամ կառուցված 155.7քմ մակերեսով կցակառույցի և ինքնակամ բացված թվով 1 բացվածքի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով:

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 20բ շենքի թիվ 16 բնակարանին կից ինքնակամ կառուցված 155.7քմ մակերեսով կցակառույցը և ինքնակամ բացված թվով 1 բացվածքը ճանաչել օրինական, որոնց համար սահմանված վճարը կազմում է 110 497 / հարյուր տաս հազար չորս հարյուր իննսուկոթ / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16146

14 մայիսի 2022թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20Բ  
ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՅՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ  
ՄԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 16.08.2022թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 20բ հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 20բ հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.0589 հա, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածազնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 10-րդ գոտում:
3. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐԶԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1615-Ղ

14 սեպտեմբեր 2022թ.

ք. Էջմիածին

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՏԱՇԵՍ ԼԱԼԱՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի գրության հիման 27.06.2022 թվականին հարուցված թիվ 1/22 վարչական գործը՝ Լալայան Արտաշես անհատ ձեռնարկատիրոջ կողմից Վաղարշապատ համայնքի Լեռնիդ Ազգալյան /Վոստանյան/ փողոցի 5/63 հասցեում հանրային սննդի կազմակերպման անհնարինությունը հարուցող հարցի մասին, պարզեց որ.

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 25.04.2022 թվականի № ՔՏՄ/06.1.5/5979-22 գրությամբ Տեսչական մարմինը հաղորդում է ներկայացրել Վաղարշապատ համայնքի ղեկավարին ՀՀ, ք. Վաղարշապատ, Վ. Կոստանյան փող., 5-րդ շենքի 1-ին հարկում գործող սննդի օբյեկտում Բեզլար Լալայանի կողմից հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվությունը, հրդեհային անվտանգության կանոնների պահպանման անհրաժեշտությունից ելնելով, վերանայել՝ հաշվի առնելով, որ սննդի օբյեկտի ծխատարն, իր տեղադիրքով կարող է հրդեհի բռնկման օջախ հանդիսանալ:

Գրությամբ բարձրացված հարցի շուրջ 30.06.2022թ.-ին հրավիրվել էր լսում, որին մասնակցելու համար պատշաճ ծանուցվել է ԱԶ Արտաշես Լալայանը և նրա լիազոր ներկայացուցիչ Ա. Խզմալյանը:

Նիստի ընթացքում Ա. Խզմալյանը ներկայացրեց Տեսչության 2022 թվականի ապրիլի 27-ի № ՔՏՄ/06.1.5/6190-22 գրությունը, ըստ որի՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի տարածքային բաժնի կողմից ՀՀ, ք. Վաղարշապատ, Վ. Կոստանյան փող., 5-րդ շենքի 1-ին հարկում գործող սննդի օբյեկտում կատարված ուսումնասիրության արդյունքում չեն հայտնաբերվել այնպիսի հրդեհային անվտանգության կանոնների խախտումներ, որոնց համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդված 1-ին պարբերությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, ուստի վարչական վարույթ չի հարուցվել և վարչական ակտ չի կայացվել, իսկ ուսումնասիրության արդյունքում Բեզլար Լալայանին (տարածքի սեփականատեր), որպես շահագործողի, Տեսչության կողմից առաջարկվել է միջոցներ ձեռնարկել հավանական հրդեհի բռնկման և հնարավոր բացասական հետևանքների կանխարգելման ուղղությամբ:

2022 թվականի փետրվարի 15-ին Արտաշես Լալայան ԱԶ-ին համայնքի ղեկավարի կողմից տրվել է թիվ 537 թույլտվություն՝ Վաղարշապատ համայնքի Լեռնիդ Ազգալյան փողոցի 5/63 հասցեում 01.01.2022-31.12.2022թթ. ընթացքում զբաղվել հանրային սննդի կազմակերպման և իրացման գործունեությամբ:

Համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 13-ի թիվ 3533 գրությամբ հարցում էր ուղարկվել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարին, որով առաջարկվել է ներկայացնել պարզաբանում առաջացած հակասությունների վերաբերյալ, մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տեսչության 25.04.2022 թվականի № ՔՏՄ/06.1.5/5979-22 գրությամբ մատնանշված չեն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջների հստակ խախտումներ, խնդրվել էր առկայության դեպքում տրամադրել արդեն իսկ կատարված ուսումնասիրությունների արդյունքներով կազմված եզրակացությունը, կամ դրա բացակայության դեպքում՝ խնդրարկվող հարցի՝ հրդեհային անվտանգության կանոնների խախտման առնչությամբ տալ եզրակացություն՝ վարչական ակտին ներկայացվող բոլոր էական փաստական և իրավական հիմքերի վկայակոչմամբ:

Միաժամանակ, նկատի առնելով այն, որ ՀՀ, ք. Վաղարշապատ, Վ. Կոստանյան փող., 5-րդ շենքի 1-ին հարկում ԱԶ Արտաշես Լալայանի կողմից հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության



վերանայումը գործնականում չի երաշխավորում՝ որպես հանրային սննդի օբյեկտ, տվյալ տարածքային շահագործման դադարեցումը, առաջարկվել էր, հիմքերի առկայության դեպքում, դիտարկել «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի բ) կետով սահմանված լիազորության գործադրման անհրաժեշտությունը:

Սակայն Տեսչության կողմից վերոնշյալ գրության պատասխան չստանալով, համայնքի ղեկավար 16.08.2022թ.-ի թիվ 4282 գրությամբ կրկին դիմել է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարին՝ խնդրարկված հարցերի պարզաբանում ստանալու համար:

Սակայն մինչ օրս ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից որևէ պատասխան չի ներկայացվել:

Տվյալ դեպքում վարչական վարույթով քննարկվող հարցի առնչությամբ, ըստ ներկայացված գրությունների նկատելի են դառնում Տեսչության կողմից տրված միմյանց հակասող մասնագիտական դիրքորոշումներ մոտեցումներ, որն անհնարին է դարձնում որոնվող փաստի՝ հրդեհային անվտանգության կանոնների խախտման վերաբերյալ միանշանակ համոզմունք ձևավորելը, ավելին Տեսչության 25.04.2022 թվականի № ՔՏՄ/06.1.5/5979-22 գրությամբ մատնանշված չեն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջների հստակ խախտումներ այլ տրված է ընդհանրական բնորոշում սննդի օբյեկտի ծխատարի տեղադիրքի վերաբերյալ՝ հնարավոր հրդեհ բռնկման առնչությամբ, որպիսի փաստարկը, առանց հիմնավոր եզրակացության, չի երաշխավորում հիշյալ գրությամբ ակնկալվող վարչական ակտի հիմնավորվածությունը՝ որոշում ընդունելու բոլոր էական փաստական իրավական հիմքերի իմաստով:

Հաշվի առնելով վերոնշյալը գտնում եմ, որ նշված հասցեում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության վերանայման ընթացակարգն իրավաչափ նպատակ կարող է հետապնդել հրդեհային անվտանգության կանոնների խախտման վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքներով Տեսչության կողմից բոլոր էական փաստական և իրավական հիմքերի վկայակոչմամբ տրված մասնագիտական եզրակացության ներգրավմամբ՝ որպես անհրաժեշտ ապացույց, սակայն Տեսչության կողմից օրենքով սահմանված ողջամիտ ժամկետներում որևէ հիմնավորում կամ պարզաբանում նշված հակասություններ վերաբերյալ չի ներկայացվել:

#### Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 25.04.2022 թվականի № ՔՏՄ/06.1.5/5979-22 գրությունը:

2. Հանձնաժողովի 30.06.2022թ. թիվ 1/22 վարչական գործով վարչական վարույթի լուսմներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

3. ԱԶ Արտաշես Լալայանի լիազոր ներկայացուցիչ Ա. Խզմալյանի կողմից ներկայացված ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի տարածքային բաժնի 2022 թվականի ապրիլի 27-ի № ՔՏՄ/06.1.5/6190-22 գրությունը:

4. Արտաշես Լալայան ԱԶ-ին համայնքի ղեկավարի կողմից տրված 2022 թվականի փետրվարի 15-ի թիվ 53 թույլտվությունը՝ Վաղարշապատ համայնքի Լեռնիդ Ազգալոյան փողոցի 5/63 հասցեում 01.01.2022-31.12.2022թթ. ընթացքում հանրային սննդի կազմակերպման և իրացման գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ:

5. Բեզլար Լալայանի 04.11.2011թ.-ի Վաղարշապատ համայնքի Լեռնիդ Ազգալոյան փողոցի 5/63 հասցեում սեփականության վկայականը:

6. Համայնքի ղեկավարի 13.07.2022թ.-ի թիվ 3533 գրությունը:

7. Համայնքի ղեկավարը 16.08.2022թ.-ի թիվ 4282 գրությունը:

#### Վարչական մարմնի պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

2. Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:



«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում.

գ) շահերի բախման իրավիճակում:

ՀՀ վճռաբեկ դատարանը վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը արձանագրել է, որ օրենսդիրը ոչ իրավաչափ է դիտում այն վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, կամ եթե ներկայացվել են այնպիսի փաստաթղթեր, որոնցից ակնհայտ է, որ ըստ էության տվյալ վարչական ակտով պետք է ընդունվեր այլ որոշում: Այսինքն՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար պետք է առկա լինի հետևյալ հիմքերից որևէ մեկը, այն է՝

«ա» վարչական ակտն ընդունվել է օրենքի սխալ կիրառմամբ, կամ

«բ» վարչական ակտն ընդունվել է օրենքի սխալ մեկնաբանմամբ, կամ

«գ» ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ վարչական ակտով պետք է ընդունվեր այլ որոշում: (տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Գամո Պետրոսյանի, «Դինո Գոյդ Մայնինգ Քամինի» ՓԲԸ-ի թիվ ՎՂ1/0143/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի բ/ կետի համաձայն՝ քննարկելով վարչական մարմնի գործողությունների դեմ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որի գործողությունները բողոքարկվել են, իրավասու է՝ մերժելու բողոքը գործողության իրավաչափ լինելու պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում, Տեսչական մարմինը 25.04.2022 թվականի № ՔՏՄ/06.1.5/5979-22 գրությամբ համայնքի ղեկավարին խնդրել է սննդի օբյեկտում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման անհրաժեշտությունից ելնելով վերանայել ԱԶ Արտաշես Լալայանին տրված հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվությունը, քանի որ, Տեսչության պնդմամբ, ՀՀ, ք. Վաղարշապատ, Վ. Կոստանյան փող., 5-րդ շենքի 1-ին հարկում գործող սննդի օբյեկտի ծխատարն, իր տեղադիրքով կարող է հրդեհի բռնկման օջախ հանդիսանալ:

Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ ըստ 27.04.2022թ.-ի № ՔՏՄ/06.1.5/6190-22 գրության, Տեսչության կողմից ՀՀ, ք. Վաղարշապատ, Վ. Կոստանյան փող., 5-րդ շենքի 1-ին հարկում գործող սննդի օբյեկտում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդված 1-ին պարբերությամբ սահմանված հրդեհային անվտանգության կանոնների խախտումների հատկանիշներով վարույթ չի հարուցվել և վարչական ակտ չի կայացվել: Ընդ որում, հիշյալ նորմի դիսպոզիցիան առերևույթ ենթադրում է իրավախախտման առկայություն՝ ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում, կոլտնտեսություններում, հասարակական վայրերում, պահեստային շենքերում, հանրակացարաններում և բնակելի տներում, ինչպես նաև համապատասխան օբյեկտներ նախագծելիս և կառուցելիս հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու, կամ հակահրդեհային գույքի, սարքավորումների, հրդեհները հայտնաբերելու և հանգցնելու ավտոմատ միջոցների օգտագործման ու պահպանության կանոնները խախտելու դեպքերում:

Նորմի վերլուծության պայմաններում հատկանշական է դառնում այն հանգամանքը, որ ինքնին հրդեհային անվտանգության կանոնների խախտման փաստը ի հայտ է բերում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված ներգործության միջոցների կիրառման հիմքեր՝ առանց տարբերակելու թե՛ ինչպիսին են այդ խախտումները, հետևաբար հրդեհային անվտանգության կանոնների ցանկացած իրավախախտում, որպիսի հատկանիշներով էլ այն բնորոշվի, ՀՀ օրենսդրության իմաստով չի հանգեցնում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանքներից վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության:

Սակայն, համաձայն 2022 թվականի ապրիլի 27-ի № ՔՏՄ/06.1.5/6190-22 գրության, պարզորոշ է դառնում այն հանգամանքը, որ ՀՀ, ք. Վաղարշապատ, Վ. Կոստանյան փող., 5-րդ շենքի 1-ին հարկում գործող սննդի օբյեկտում կատարված ուսումնասիրության արդյունքում Տեսչության կողմից հրդեհային անվտանգության կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել, հետևաբար առնվազն 27.04.2022թ.-ի դրությամբ վարչական իրավախախտում չի հայտնաբերվել, որի հիմքով կարող էր ընդունվել վարչական ակտ:



Բացի վերոգրյալը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տեսչության 25.04.2022 թվականի № ՔՏՄ/06.1.5/597/22 գրությամբ մատնանշված չեն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջների հստակ խախտումներ և այն, որ համաձայն ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի տարածքային բաժնի կողմից Բեգլար Լալայնին 27.04.2022թ.-ին տրված ՔՏՄ/06.1.5/6190-22 գրության՝ ՀՀ, ք. Վաղարշապատ, Վ. Կոստանյան փող., 5-րդ շենքի 1-ին հարկում գործող սննդային օբյեկտում կատարված ուսումնասիրության արդյունքում Տեսչության կողմից հրդեհային անվտանգության կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել, համայնքի ղեկավարի 13.07.2022թ.-ի թիվ 3533 և 16.08.2022թ.-ի թիվ 4282 գրություններով Տեսչական մարմնին խնդրվել էր առկայության դեպքում տրամադրել արդեն իսկ կատարված ուսումնասիրությունների արդյունքներով կազմված եզրակացությունը, կամ դրա բացակայության դեպքում խնդրարկվող հարցի՝ հրդեհային անվտանգության կանոնների խախտման առնչությամբ տալ եզրակացություն վարչական ակտին ներկայացվող բոլոր էական փաստական և իրավական հիմքերի վկայակոչմամբ:

Սակայն Տեսչության կողմից օրենքով սահմանված ողջամիտ ժամկետներում համայնքի ղեկավար գրություններին փողովել են անպատասխան:

Տվյալ պարագայում գտնում եմ, որ ԱՀ Արտաշես Լալայնին 15.02.2022թ.-ին տրված՝ հանրային սննդային կազմակերպմամբ և իրացմամբ զբաղվելու թիվ 537 թույլտվությունը վերանայելու համար ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից բավարար ապացույցներ չեն ներկայացվել, ուստի գտնում եմ, որ 15.02.2022թ.-ի թիվ 537 թույլտվությունը իրավաչափ է:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ ԱՀ Արտաշես Լալայնին 15.02.2022թ.-ին տրված՝ հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ զբաղվելու թիվ 537 թույլտվությունը վերանայելու համար ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից բավարար ապացույցներ չեն ներկայացվել, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի, 73-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով:

#### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1 ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի՝ ԱՀ Արտաշես Լալայնին 15.02.2022թ.-ին տրված՝ հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ զբաղվելու թիվ 537 թույլտվությունը վերանայելու մասին ներկայացրած դիմումը մերժել:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշման ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԵ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐԾԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16/64

14 սեպտեմբեր 2022թ.

ք. Էջմիածին

ՄԱԹԵՎՈՍ ԴԱՎԹԻ ՄԱՐՈՒՔՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կոմիտասի փողոցի թիվ 46 տան բնակիչ Մաթևոս Դավթի Մանուկյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 0189334 տրված 28.09.2000թ., «Ավագ Ավագյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 21.03.2022թ. կատարված չափագրությունը և և Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022JWY5N9/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող 04-002-0248-0017 կադաստրայան ծածկագրով 0.3985հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից 0.04հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման փոփոխելու և ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 8-րդ մասի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 22.12.2009թ. թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 22.07.2022թ. տրված թիվ 1/Վ-156 եզրակացությունը, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 22.08.2022թ. արտահերթ չորրորդ նիստի թիվ 127 որոշումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող 04-002-0248-0017 ծածկագրով 0.3985հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից /3-րդ կարգի վարելահող/ մի հատվածը՝ 0.04հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման և ինքնակամ կառուցված բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Համաձայն տարածազննահատման գոտիականության հողամասը գտնվում է 11-րդ գոտում և կադաստրային արժեքը մեկ քառակուսի մետրի համար կազմում է 4441.8 /չորս հազար չորս հարյուր քառասունմեկ մեթոդը ութ/ ՀՀ դրամ, փոփոխման պահին հողամասի կադաստրային արժեքների տարբերությունը մեկ քառակուսի մետրի համար 4137.3 /չորս հազար հարյուր երեսունյոթ մեթոդը երեք/ ՀՀ դրամ է, 0.04հա համար կազմում է 1 776 720 /մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունմեկ հազար յոթ հարյուր քսան/ ՀՀ դրամ, որը պետք է վճարել համայնքային բյուջե՝ 900325151166 հաշվեհամարին:
3. Ինքնակամ կառուցված 282.7քմ /արտաքին 282.7քմ, ներքին 231.6քմ/ մակերեսով բնակելի տան օրինականացման համար սահմանված 556637 /հինգ հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր երեսունյոթ/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4. Հետագա կառուցապատումն իրականացնել ՀՀ քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ







ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐԶԱԿԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16184

14 ապրիլի 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Կոմիտասի փողոցի թիվ 46 տան բնակիչ՝ Մաթևոս Դավթի Մարուքյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության վկայական թիվ 0189334 տրված 28.09.2000թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002N3DLNGZ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.էջմիածին, Երևան-Արմավիր մայրուղի թիվ 4/6 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ԳԱՄՊԱՐՅԱՆ





## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐԾԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

թիվ 16/ՅԱ

14 սեպտեմբերի 2022 թ.

ք. Էջմիածին

### ՎԱՂԱՐԾԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐԾԱՊԱՏ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՔԱՐԶՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 35 տան բնակիչ՝ Համետ Սուրենի Աշխբաբյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, Սուրեն Համետի, Նարեկ Համետի, Ռուզաննա Սուրիկի, Աիդա Սուրենի Աշխբաբյանների և Ալայա Գաբրիելի Բաբաջանյանին պատկանող /իմը՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 20.01.2022թ. տրված քաղվածքը, 20.01.2022թ. տրված տեղեկանքը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 12.07.2022թ. կայացված վճռի, քաղաքացիական գործ ԱՐԴ1/0080/02/22, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 18.08.2022թ. հաստատված թիվ 4271, 4272, 4273 և 4274 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրերը և <<Կարեն Մաչանյան>> ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 19.08.2022թ. կատարված չափագրությունը/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող 04-002-0163-ծածկագրով հողամասի հատակագծում ընդգրկված 0.0289 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք այլ հողատեսքը՝ փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի պտղատու այգու /կորիզավոր/ խնդրանքով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող 04-002-0163-ծածկագրով հողամասի հատակագծում ընդգրկված 0.0289 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք այլ հողատեսքը՝ փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի պտղատու այգու /կորիզավոր/:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՂԵԿԱՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16194

14 անդրադարձված 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Նալբանդյան փողոցի թիվ 8ա տան բնակիչ՝ Գուրգեն Սարգսի Իսրայելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Նալբանդյան փողոցի թիվ 8ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 06.09.2022թ. հաստատված թիվ 4737 գրանցամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002ETXBJA3/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.էջմիածին, Մ.Նալբանդյան փողոց թիվ 8/1 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 16804

14 օգոստոսի 2022թ.

ք. Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. N 1066-Ն որոշմամբ և հաշվի առնելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 35 տան բնակիչ Համլետ Սուրենի Աշխբաբյանի դիմումը՝ իրեն, Սուրեն Համլետի, Նարեկ Համլետի, Ռուզաննա Սուրիկի, Աիդա Սուրենի Աշխբաբյաններին և Ալայա Գաբրիելի Բաբաջանյանին պատկանող /հիմք՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 20.01.2022թ. տրված քաղվածքը, 20.01.2022թ. տրված տեղեկանքը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 12.07.2022թ. կայացված վճռի, քաղաքացիական գործ ԱՐԴ1/0080/02/22, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 18.08.2022թ. հաստատված թիվ 4271,4272,4273 և 4274 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրերը և <<Կարեն Մաչանյան>> ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 19.08.2022թ. կատարված չափագրությունը/, <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0163-/ 0.477հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու /կորիզավոր/ փոխադրելու խնդրանքով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր 04-002-0163-/ 0.477հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը, փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու /կորիզավոր/:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՂԵԿԱՊԱՐՅԱՆ







# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ    Թ Ի Վ 1621-Լ

«14» սեպտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

## ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով համաքաղաքային միջոցառումների համար բացիկներ ձեռք բերելու նպատակով.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ    Ե Մ՝

- Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 250.0 հազ. դրամ փոխանցել ԱԶ Կարապետ Հարությունյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ







ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16224

15 մայիսի 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Այվազովսկու փողոցի թիվ 9 տան բնակիչ՝ Արմեն Արամի Ղուկասյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Չարենցի թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀայաստանի Ազգային Արխիվ>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 18.05.2014թ. տրված թիվ Ամ-345 արխիվային քաղվածքը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002HFWDD9/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Չարենցի 1-ին թաղամաս թիվ 360/3 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1623/Վ

15 օգոստոսի 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱՂԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Հայրապետ Իսաղուլյանի լիազորված անձ՝ Սիրվարդ Սամսոնի Բաղրամյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Չարենցի թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղաքային խորհրդի 16.07.1993թ. գործադիր կոմիտեի նիստի թիվ 14 արձանագրությունից քաղվածքը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002HWXGUM6/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Չարենցի 1-ին թաղամաս թիվ 406/6 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ





# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 16344

15 սեպտեմբեր 2022 թ.

ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 2 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Ալեքսանդր Գևորգի Ավետիսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, Աղունիկ Սարգսի, Լուսվարդ Ղազարի, Խորեն Ալեքսանդրի, Ռազմիկ Ալեքսանդրի և Անահիտ Ալեքսանդրի Ավետիսյաններին պատկանող /հիմք՝ էջմիածին համայնքի ղեկավարի կողմից 07.07.2021թ. տրված քաղվածքը, 07.07.2021թ. տրված տեղեկանքը, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 22.07.2022թ. հաստատված թիվ 5051 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը/, <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0235-0002/, 0.25հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի 09.09.2022թ. N01/14/05477-2022 եզրակացությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0235-0002/ 0.25հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԲԱՐԱՊԵՏԱՆ











# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 1626X

15 սեպտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Հայկ Դանդանի լիազորված անձ՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Պատկանյան փողոցի թիվ 51 շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ Սիրանուշ Էմիլի Դանդանը՝ Ջեմմա Թադևոսի Ավագյանին, Մարետա Ստեփանի Առաքելյանին, Գայանե Շադինովի Բադալյանին, Արայիկ Էմիլի, Բաբկեն Արայիկի, Ջեմմա Արայիկի, Հայկ Էմիլի և Անդրանիկ Հայկի Դանդաններին պատկանող /հիմք՝ Էջմիածին համայնքի ղեկավարի կողմից 13.05.2021թ. տրված քաղվածքը, 13.05.2021թ. տրված տեղեկանքը, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 16.07.2022թ. հաստատված թիվ 3927 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիրը/, <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0161-0040/, 1.48հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի 09.09.2022թ. NO1/14/05478-2022 եզրակացությունը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0161-0040/ 1.48հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՍՏԱՐՅԱՆ







# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 16244

15 սեպտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Ամայա Հարությունի Հարությունյանի լիազորված անձ՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արմավյան փողոցի թիվ 8ա տան բնակիչ Ժորա Սեդրակի Ղազարյանը՝ Ամայա Հարությունի Հարությունյանին, Մուշեղ Աշոտի, Դավիթ Աշոտի և Վարդան Աշոտի Աթոյաններին պատկանող /հիմք՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 11.08.2022թ. տրված N4178 քաղվածքը, 11.08.2022թ. տրված N4178 տեղեկանքը, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 02.09.2022թ. հաստատված թիվ 6757 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը/, <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0227-0003/, 0.84հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի 09.09.2022թ. N01/14/05478-2022 եզրակացությունը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0227-0003/ 0.84հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՂԵՄԱՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16284

16 սեպտեմբերի 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Դավիթ Անհաղթի /Նախկին՝ Օրջոնիկիձե/ փողոցի թիվ 36 տան բնակիչ՝ Արթուր Գևորգի Խաչատրյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

